



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

« 24 » հոկտեմբեր 2012թ.

Երևանի Արաբկիր վարչական շրջանը՝ ի դեմս ղեկավար Հրայր Անտոնյանի, ՀՀ Լոռու մարզպետարանը՝ ի դեմս մարզպետ Արթուր Նալբանդյանի, կնքեցին սույն համագործակցության հուշագիրը հետևյալի մասին՝
Երևանի Արաբկիր վարչական շրջանը և ՀՀ Լոռու մարզպետարանը հաստատում են իրենց պատրաստակամությունը՝ նպաստելու

1. Արաբկիր վարչական շրջանի և Լոռու մարզպետարանի հետ համագործակցության զարգացմանը, մշակութային միջոցառումների իրականացմանը:
2. Մարզային դպրոցների աշակերտների փոխայցելությունների ամրապնդմանը:
3. Կազմակերպել դպրոցականների այցը Մատենադարան, թանգարաններ, պատկերասրահներ, մշակութային այլ օջախներ:
4. Միացյալ համերգների միջոցով բացահայտել Լոռու մարզային դպրոցների շնորհալի աշակերտներին, նրանց խրախուսել պատվոգրերով, խորհրդանշական մրցանակներով:
5. Հարցադրումների միջոցով ուսումնասիրել երեխաների նախասիրությունները, հետաքրքրությունների շրջանակը, ճշտել թե ինչ պարբերականից են օգտվում, ինչպիսի հաղորդումներ են նախընտրում դիտել կամ ուկնդրել և ինչու:
6. Համագործակցել թատրոնների հետ, դպրոցականների համար կազմակերպել դիտումներ, հնարավորության սահմաններում կազմակերպել քննարկումներ:
7. Տարվա ընթացքում Երևանում կազմակերպել և անցկացնել ասումնքի մրցույթ, լավագույններին ընդգրկել Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից կազմակերպվող համերգներին:
8. Տարվա ընթացքում կազմակերպվող փոխայցելությունների ժամանակ ձեռք բերել պայմանավորվածություն և դպրոցների միջև անցկացնել սպորտային մրցումներ /ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, շախմատ, թենիս, բազկամարտ/:

Երևանի Արաբկիր վարչական շրջանը և ՀՀ Լոռու մարզպետարանը համաձայնեցին՝

- մասնակցել սույն Հուշագրի իրականացման աշխատանքներին, կողմերի կազմակերպած հանդիպումներին, քննարկումներին ու միջոցառումներին,
- տրամադրել համատեղ ծրագրերի վերաբերյալ սույն Հուշագրի իրականացմանն առնչվող անհրաժեշտ տեղեկատվություն,
- պահպանել սույն Հուշագրի դրույթները և համատեղ աշխատանքի ընթացքում ապահովել փոխըմբռնման մթնոլորտ, բոլոր հարցերի առնչությամբ իրականացնել համաձայնեցված աշխատանք և ցուցաբերել աջակցություն:

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝



Handwritten signature of the District Administration representative.



Handwritten signature of the Lori Marzpet representative.

ՇՐՋԱՆԴԵԿԱՎԱՐ՝
ՀՐԱՅՐ ԱՆՏՈՆՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ